



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 343-Ա/2

16.03.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ, ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված դրույթները, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն և 2010 թվականի ապրիլի 29-ի N 566-Ն որոշումների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ֆինանսաբյուջետային վարչությանը՝ նախարարությանը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ծրագրերի միջոցառումների կատարող համարվող ծրագրերով և միջոցառումներով սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման մասով պատասխանատու ստորաբաժանումներ սահմանելու նպատակով՝ մինչև տվյալ ֆինանսական տարվա սկիզբը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը ներկայացնել համապատասխան հրամանի նախագիծ՝

այն նախապես համաձայնեցնելով նախարարի բոլոր տեղակալների հետ՝ հրամանում ներառելով նաև պայմանագրերի կնքման նպատակով անհրաժեշտ միջոցառումների և տվյալների տրամադրման (ըստ պատասխանատուների), պայմանագրերի կազմման և ստորագրման ներկայացնելու ժամկետներ:

2. Սահմանել,

1) տվյալ ֆինանսական տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով պետական բյուջեում վերաբաշխումների միջոցով նոր ծրագրերով և միջոցառումներով սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման մասով պատասխանատու ստորաբաժանումներ են հանդիսանում տվյալ վերաբաշխումը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումները: Այս դեպքում պայմանագրերի կնքման նպատակով անհրաժեշտ միջոցառումների և տվյալների տրամադրման, պայմանագրերի կազմման և ստորագրման ներկայացնելու առավելագույն ժամկետը որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրն է,

2) սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքները (պայմանագրի կնքման համար անհրաժեշտ միջոցառումների և տվյալների հավաքագրման ձևի և ժամկետների որոշում, հավաքագրված միջոցառումների և տվյալների հիման վրա ֆինանսական հաշվարկների իրականացում, բյուջետային միջոցների բաշխում, պայմանագրի կազմում) իրականացնում է ֆինանսաբյուջետային վարչությունը, իսկ պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ միջոցառումների, ծրագրերի և տվյալների հավաքագրման, մշակման և տրամադրման գործընթացը իրականացնում են պատասխանատու ստորաբաժանումները:

3. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում **սուբսիդիաների և նպաստների** հատկացման պայմանագրեր կնքելու նպատակով նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը պատասխանատու ստորաբաժանումներից, ուսումնական կամ այլ հաստատություններից (իրավական ակտերով նախատեսված դեպքերում օգտվելով նաև էլեկտրոնային հարթակների տեղեկատվությունից) անհրաժեշտ տվյալները ստանալուց հետո յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 25-ը կազմում և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանն է ներկայացնում սուբսիդիաների հատկացման պայմանագրեր՝ նախապես դրանք համաձայնեցնելով պատասխանատու ստորաբաժանումների և իրավաբանական վարչության հետ:

4. Սահմանել, որ **սուբսիդիաների** հատկացման պայմանագրերի շրջանակներում հանձնման-ընդունման ակտերը ստորագրվում, իսկ հաշվետվությունները ընդունվում և ստորագրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հրամանով հաստատված ձևերին համապատասխան, ընդ որում, հանձնման-ընդունման ակտերը ստորագրվում են պատասխանատու ստորաբաժանումների, իսկ հաշվետվությունները՝ նաև ֆինանսաբյուջետային վարչության պետերի կողմից:

5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում **առանց մրցույթի դրամաշնորհների և նվիրատվությունների** հատկացման պայմանագրեր կնքելու նպատակով նախարարության պատասխանատու ստորաբաժանումները համապատասխան զեկուցագրով ֆինանսաբյուջետային վարչություն են ներկայացնում կազմակերպությունների հետ կնքվելիք դրամաշնորհային և նվիրատվությունների հատկացման պայմանագրերի շրջանակում կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները՝ համաձայն Հավելված 1-ի (առկայության դեպքում՝ նաև ծախսերի նախահաշիվները և միջոցառումների ծրագրերը):

6. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը սույն հրամանի 5-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո կազմում և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանն է ներկայացնում առանց մրցույթի դրամաշնորհների և նվիրատվությունների հատկացման պայմանագրեր՝ նախապես դրանք համաձայնեցնելով պատասխանատու ստորաբաժանումների և իրավաբանական վարչության հետ: Ընդ որում, կախված միջոցառման բնույթից՝ պայմանագրով կարող են նախատեսվել նաև ֆինանսական հաշվետվությունների այլ ձևաչափեր և հաշվետվությունների ներկայացման տարբեր ժամկետներ, ինչպես նաև կանխավճարների 80 տոկոսից տարբերվող տոկոսներ:

7. Պատասխանատու ստորաբաժանումները **առանց մրցույթի դրամաշնորհների և նվիրատվությունների** հատկացման պայմանագրերի շրջանակներում.

1) իրականացնում են ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով մոնիթորինգ և արդյունքները ներկայացնում համակարգող փոխնախարարին և նախարարության գլխավոր քարտուղարին, իսկ պայմանագրերի կատարման ընթացքում, գործողության ավարտին և դրանից հետո պայմանագրերով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին գրավոր տեղեկացնում են նաև իրավաբանական վարչությանը,

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ընդունում են իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպությունների ներկայացրած կատարողական հաշվետվությունները **/աճողական/**, դրանք ստանձնած պայմանագրային պարտավորություններին համապատասխանելու դեպքում Հավելված N2-ով սահմանված ձևաչափով կազմում են ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն ու եզրակացություն և ներկայացնում են նախարարության ֆինանսաբյուջետային վարչություն (բացառությամբ ուսուցման ծրագրերի),

3) կազմակերպությունների ներկայացրած կատարողական հաշվետվությունները ընդունելուց հետո 2-օրյա ժամկետում դրանք ներկայացնում են նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն:

8. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը պարտավոր է՝

1) պատասխանատու ստորաբաժանումների կողմից սույն հրամանի դրույթները ոչ ժամանակին կամ մասնակի կատարելու դեպքում դադարեցնել տվյալ ծրագրի ֆինանսավորումը մինչև պատասխատանու ստորաբաժանման կողմից առկա թերությունների վերացումը՝ այդ մասին զեկուցագրով տեղեկացնելով նախարարության գլխավոր քարտուղարին,

2) ուսումնասիրել և ընդունել կազմակերպությունների կողմից ներկայացված դրամաշնորհների ֆինանսական հաշվետվությունները /կամ ընդհանուր հաշվետվության ֆինանսական մասը/ և ըստ անհրաժեշտության միջոցներ ձեռնարկել կազմակերպությունների կողմից չծախսված գումարների վերադարձման կամ հաշվետվություններում այլ անհամապատասխանությունների շտկման նպատակով:

9. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում **դրամաշնորհների (մրցութային)** հատկացման պայմանագրեր կնքելու նպատակով նախարարության պատասխանատու ստորաբաժանումները Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան նախարարի ստորագրմանն են ներկայացնում տվյալ դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) կազմավորելու մասին հրամանի նախագիծ:

10. Հանձնաժողովի որոշումը (այն կազմակերպության (կազմակերպությունների) ցանկը հաստատելու մասին, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման պայմանագիր (պայմանագրեր)) Նախարարի կողմից հաստատվելուց հետո պատասխանատու ստորաբաժանումը դրա հետ միասին ֆինանսաբյուջետային վարչություն է ներկայացնում համապատասխան ծրագրերն ու նախահաշիվները (նախարարի համապատասխան հրաման(ներ)ը, եթե դրանք հաստատվել են նախարարի հրամանով):

11. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը սույն հրամանի 10-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո կազմում և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանն է ներկայացնում դրամաշնորհների հատկացման պայմանագրերը՝ նախապես դրանք համաձայնեցնելով պատասխանատու ստորաբաժանումների և իրավաբանական վարչության հետ: Ընդ որում, կախված միջոցառման բնույթից՝ պայմանագրով կարող են նախատեսվել նաև ֆինանսական հաշվետվությունների այլ ձևաչափեր և հաշվետվությունների ներկայացման տարբեր ժամկետներ, ինչպես նաև կանխավճարների 80 տոկոսից տարբերվող տոկոսներ:

12. Պատասխանատու ստորաբաժանումները.

1) սույն հրամանում նշված պայմանագրերի շրջանակներում իրականացնում են ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով մոնիթորինգ և արդյունքները ներկայացնում համակարգող փոխնախարարին և նախարարության գլխավոր քարտուղարին (դրամաշնորհների (մրցութային) հատկացման պայմանագրերի մասով՝

Հանձնաժողովին), իսկ պայմանագրերի կատարման ընթացքում, գործողության ավարտին և դրանից հետո պայմանագրերով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին գրավոր տեղեկացնում են նաև իրավաբանական վարչությանը,

2) պայմանագրով նախատեսված ժամկետներում ընդունում են իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպությունների ներկայացրած կատարողական հաշվետվությունները, դրանք ստանձնած պայմանագրային պարտավորություններին համապատասխանելու դեպքում Հավելված N2-ով սահմանված ձևաչափով կազմում են ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն ու եզրակացություն և դրանք պայմանագրի կատարման վերաբերյալ հանձնաժողովի եզրակացության հետ միասին ներկայացնում են նախարարության ֆինանսաբյուջետային վարչություն,

3) կազմակերպությունների ներկայացրած կատարողական հաշվետվությունները ընդունելուց հետո 2-օրյա ժամկետում դրանք ներկայացնում են նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն:

13. ~~Արևմտահայկական~~ մոնիթորինգն իրականացվում է ծրագրի (առանձին միջոցառումների) վերաբերյալ քանակական և որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման, գնահատման և ամփոփման միջոցով, ընդ որում որպես տեղեկատվության հավաքագրման աղբյուր կարող են հանդիսանալ մշտադիտարկումները, բանավոր և գրավոր հարցումները (այդ թվում՝ կապի տարբեր միջոցներով և ինտերնետային հարթակներով), ՀԼՄ-ներով ներկայացվող տեղեկատվությունը, պաշտոնական և ոչ պաշտոնական հրապարակումները և այլն:

14. Նախարարության իրավաբանական վարչությունը.

1) իրականացնում է սույն հրամանում նշված պայմանագրերի, դրանցում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին համաձայնագրերի փորձաքննությունը,

2) պայմանագրերով նախատեսված ժամկետների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու նպատակով պատասխանատու ստորաբաժանումից և ֆինանսաբյուջետային վարչությունից անհրաժեշտության դեպքում պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթերը, հարցում է կատարում պատասխանատու ստորաբաժանմանը պայմանագրերի կատարման ընթացքի վերաբերյալ և, ստացված տեղեկությունները համեմատելով իրավաբանական վարչությունում եղած տվյալների հետ, պայմանագրի գործողության ընթացքում պայմանագրով նախատեսված պարտավորության (պարտավորությունների) չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պատասխանատու ստորաբաժանումից պահանջում է գրավոր կամ բանավոր տեղեկություններ, անհրաժեշտության դեպքում վարում է բանակցություններ պայմանագրի մյուս կողմի հետ,

3) պայմանագրերով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ պայմանագրերի պատշաճ կատարումն ապահովելու համար և վերջիններիս մասին գրավոր զեկուցում է նախարարության գլխավոր քարտուղարին:

1) պատասխանատու է սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման պայմանագրերի կազմման, դրանք համաձայնեցման և ստորագրման ներկայացման, ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրման և նախարարին, գլխավոր քարտուղարին, ֆինանսների նախարարությանը ներկայացման գործընթացի համար: Ընդ որում՝ մեծ ծավալների (5 և ավելի պայմանագրեր) դեպքում Mulberry համակարգով համաձայնեցման ներկայացնելիս կարող է համակարգ մուտքագրվել պայմանագրի տիպային ձևը և պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունների ցանկը՝ նշելով ոչ ֆինանսական ցուցանիշները և ֆինանսավորման չափը,

2) սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման պայմանագրերը նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնելիս պարտավոր է ապահովել այդ պայմանագրերի բնօրինակի դարձերեսին կատարողի, ստորաբաժանման ղեկավարի և գլխավոր քարտուղարի տեղակալի ստորագրումը,

3) իրականացնում է ստորագրված պայմանագրերի դրանցում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին համաձայնագրերի համարակալումը, հաշվառումն ու բնօրինակների պահպանումը՝ իսկ դրանց համարակալման և հաշվառման աշխատանքների ավարտից հետո դրանց երկրորդ բնօրինակները հանձնում է պայմանագրի երկրորդ կողմին՝ պայմանագրերի պատճենամուտի էլեկտրոնային տարբերակները պահպանելով ֆինանսաբյուջետային վարչությունում, ինչպես նաև հանձնելով համապատասխան պատասխանատու ստորաբաժանմանը և նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը (դրանց հրապարակման անրաժեշտության դեպքում),

4) մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը նախարարին է ներկայացնում նախորդ տարվա նախարարության կողմից տրամադրված սուբսիդիաների, նպաստների և դրամաշնորհների տարեկան կտրվածքով կատարման վերաբերյալ ամփոփ հաշվետվություն՝ նշելով յուրաքանչյուր պայմանագրի կատարման ընթացքը և վերադարձված բյուջետային միջոցների չափը:

16. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունը պայմանագրերը և կատարողական հաշվետվությունները ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց հրապարակումը նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

17. Սահմանել, որ.

1) սույն հրամանով սահմանված ընթացակարգով իրականացվում է նաև սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման պայմանագրերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին համաձայնագրերի կնքման գործընթացը,

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում առանձին միջոցառումների համար նախարարի հրամանով կարող են սահմանվել սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման գործընթացը կանոնակարգող այլ նորմեր, քան սահմանված է սույն հրամանով:

18 Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է նաև նախարարության 2020 թվականի բյուջետային ամբողջ գործընթացի վրա:

19. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2020 թվականի փետրվարի -ի N հրամանի

202... ፆ. _____ -ክኒ

ሆኮደበያሊቡበኩሆኒቴቦ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
Ընդամենը						

Հավելված 2

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2020 թվականի փետրվարի _____-ի N _____ հրամանի

Հավելված

202. . . թ. _____ -ին
կնքված N _____ պայմանագրի

Ծրագրի անվանումը _____

Ծրագրի իրականացման տևողությունը /աճողական/ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը _____

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա- կանության նիշոցառման անվանումը	Չափո- րոշիչը (նկարա- գրությունը)	Չափո- րոշի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանա- կահատվածի համար	Ցուցանիշի փոփո- խություններն ըստ համապա- տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակա- հատվածի համար (սյ. 1+սյ. 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա- հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերու- թյունը (սյ. 4- սյ. 3)	Տարբերության պատճառը (սյ. 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյ. 5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

(Եթե ծրագրի ֆինանսավորումը շարունակվելու է ապա եզրակացության մեջ նշվում է ծրագրի ընթացիկ կատարողականի մասին դրույթ և առաջարկություն ֆինանսատնտեսաբյուջետային վարչությանը՝ իրականացնելու հաջորդ փուլի ֆինանսավորումը, եթե ծրագրի ֆինանսավորումն ավարտվել է, ապա եզրակացության մեջ նշվում է ծրագրի ընդհանուր կատարողականի հաստատման մասին)

[illegible]

Պատասխանատու ստորաբաժանման
անվանումը և ղեկավարի անունը՝

ստորագրությունը